

Գր. Վ 28.06.12  
Կոդ՝ 12112259



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՓՈՒՎԱՐՉԱՊԵՏ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

«20» ..... 06 ..... 2012թ.

N ..... 06-96 .....

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի N 12-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով հ Ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի  
2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության մրցութային և  
ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու  
մասին» N 12-Ն հրամանում (այսուհետ՝ հրաման) կատարել հետևյալ  
փոփոխությունները.

1) Հրամանով հաստատված N 1 հավելվածի (այսուհետ՝ N 1 հավելված) 8-րդ  
կետում «մասնակիցներին» բառը փոխարինել «մրցույթի մասնակիցներին (այսուհետ՝  
մասնակիցներ)» բառերով.

2) N 1 հավելվածի 10-րդ կետի «ե» ենթակետում «մրցույթի մասնակիցների  
(այսուհետ՝ մասնակիցներ)» բառերը փոխարինել «մասնակիցների» բառով.

3) Հրամանով հաստատված N 2 հավելվածի (այսուհետ՝ N 2 հավելված) 6-րդ կետում «մրցույթի» բառը փոխարինել «ատեստավորման» բառով.

4) N 2 հավելվածի 8-րդ, 8.5-րդ կետերում և 15-րդ կետի «գ» ենթակետում «մասնակիցներին» բառը փոխարինել «ատեստավորվող համայնքային ծառայողներին» բառերով.

5) N 2 հավելվածի 10-րդ կետի «ե» և «ի» ենթակետերը ուժը կորցրած ճանաչել.

6) N 2 հավելվածի 16-րդ կետում «համայնքի ղեկավարին եզրակացություն տալու պահից» բառերը փոխարինել «ատեստավորման արդյունքները հրապարակվելու պահից».

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:



Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ